

«Արժանապատիվ ուղի» կուսակցության նախընտրական ծրագիր

Գյումրի քաղաքի սոցիալական, տնտեսական, առողջապահական, բնապահպանական, քաղաքաշինության և մյուս բնագավառների կառավարման քաղաքականությունը դեռևս թերի է և իրավիճակային, որի հետևանքով գյումրեցիներին հուզող հիմնախնդիրները տարեցտարի ավելանում և խորանում են, չեն լուծվում և կանխատեսելի չէ, թե երբ են լուծվելու: Այդ իսկ պատճառով «Արժանապատիվ ուղի» կուսակցությունը հրատապ և անհրաժեշտ է համարում քաղաքային նշանակության մի շարք ռազմավարական երկարաժամկետ ծրագրերի մշակումը և իրականացումը՝ Գյումրի քաղաքում առկա տարաբնույթ հիմնախնդիրների հստակ գույքագրման և դրանց լուծումների համար կոնկրետ ժամանակացույցի և պատասխանատուների սահմանումով: Մեր առաջնային ռազմավարական նպատակային ծրագրերը, կարգախոսները և ուղղություններն են՝

«Գյումրեցին առանց աղքատության», որի նպատակն է առաջիկա 5 տարիների ընթացքում նվազագույնի հասցնել չքավորությունը, արտագաղթը և գործազրկությունը:

«Բնակչության զբաղվածության ընդլայնում, նոր աշխատատեղերի ստեղծում»: Բոլոր ջանքերը ներդնել նոր աշխատատեղերի ստեղծման և բնակչության զբաղվածության ընդլայնման ռազմավարական ծրագրերի մշակման և իրականացման համար:

«Մրցունակ և զարգացած քաղաք» Ռազմավարական ծրագիր, որի մշակումը և ներդրումը երաշխավորում է, անկախ սոցիալական վիճակից, յուրաքանչյուր գյումրեցու բարձրագույն և մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն, մշակույթի, գիտության և նոր տեխնոլոգիաների զարգացում, մատչելի և որակյալ առողջապահական համակարգի ներդրում՝ նպատակ ունենալով Գյումրին դարձնել գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության և նոր տեխնոլոգիաների կենտրոն:

«Գյումրի քաղաքում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Օրենքի ընդունման դեպքում աղետի գոտի համարվող Գյումրի քաղաքում առևտրատնտեսական գործունեություն իրականացվող կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար կսահմանվեն էական հարկային արտոնություններ, որի արդյունքում Գյումրի քաղաքում նշանակալիորեն կակտիվանան նպատակային ներդրումները, տնտեսվարողների համար կստեղծվեն հարկային բարենպաստ և առանձնահատուկ, արտոնյալ պայմաններ: Ավելին՝ Գյումրիում գրանցված և գործունեություն ծավալող իրաբավականական անձիք և կազմակերպությունները, տարբեր շինարական մրցույթների մասնակցելով, կստանան առաջնահերթության իրավունք, և վերջիններս մրցույթներում կարող են հաղթող ճանաչվել նույնիսկ այն դեպքում, երբ մրցույթի մյուս մասնակիցների առաջարկած գնից մինչև 5 տոկոս բարձր գին են առաջարկել: Իսկ Գյումրի քաղաքի «Շիրակ» օդանավակայանի համար սահմանել հավելյալ արտոնություններ, որը հնարավորություն կտա ավելացնելու չվերթների քանակը, կստեղծվեն նոր աշխատատեղեր:

«Մաքուր և բարեկարգ քաղաք» ծրագրի նպատակը քաղաքի աղբահանության ցավոտ հիմնախնդրի լուծումն է, Գյումրու գլխավոր և երկրորդական փողոցների բարեկարգումը և լուսավորումը, քաղաքի բնապահպանական նոր ոճի ձևավորումը, կանաչ ճարտարապետության ավանդույթների վերականգնումն ու զարգացումը:

«Գյումրին առանց տնակների» ծրագրի նպատակը քաղաքի անօթևանության խնդրի ամբողջական լուծումն է՝ ***ոչ մի գյումրեցի ընտանիք չպետք է ապրի տնակում:***

Գյումրի քաղաքի ռազմավարական կառավարման սկզբունքները

Աշխարհի առավել զարգացած քաղաքների կառավարման մարմինները քաղաքային ենթակառուցվածքների ղեկավարման գործում որդեգրել են ռազմավարական մտածելակերպի և նորարարության արդյունավետ համադրման սկզբունքը: Այս տեսանկյունից Գյումրիում քաղաքային կառավարումը պետք է ունենա հետևյալ գերակայությունները.

- Համարձակ բարեփոխումներ՝ ուղղված Գյումրու զարգացմանը և գյումրեցիների շահերի պաշտպանությանը
- Քաղաքային կառավարման բոլոր ոլորտների համար ռազմավարական զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակում և իրականացում, նորարական մոտեցումների կիրառում:
- Սոցիալական ծայրահեղ բևեռացվածությունից, հուսալքությունից և անտարբերությունից, բյուրոկրատական քաշքշուկներից ձերբագատվելուն ուղղված քաղաքականության իրականացումը քաղաքային կառավարման գործում:
- Քաղաքային իշխանության համակարգում ավագանու դերի կարևորումը և բարձրացումը: Կառավարման ոլորտում թափանցիկության վերահսկելիության, պատասխանատվության և կատարողական կարգապահության մեխանիզմների ներդրումը և ամրապնդումը:
- համատիրությունների դերի կարևորումը և բարձրացումը՝ անկախ գործելու և զարգանալու հստակ երաշխիքների ներդրումը:
- քաղաքացի- քաղաքային պետական ծառայող ուղղակի շփման նշանակալի նվազեցում՝ ծառայողների կողմից չարաշահումները և հնարավոր դրամաշորթությունները կանխարգելելու համար:
- Կոռուպցիայի դեմ անհաշտ պայքարի ծավալում:
- Էլեկտրոնային կառավարման արագացված համակարգի ամբողջական ներդրում:
- Մասնագիտական բարձր պատրաստականություն ունեցող պետական ծառայողի էթիկական վարվելակերպ դրսևորող և բարեխիղճ ծառայողների համար զնահատման համակրգի ներդրում, նրանց ֆինանսական և բարոյական աջակցության ցուցաբերում:
- տարբեր ոլորտների արդյունավետ կառավարման նպատակով քաղաքացիների կողմից մասնագիտական խորհուրդների ձևավորում:

Քաղաքաշինություն

- Առանձնահատուկ ուշադրություն դարձնել Գյումրու համալիր և հավասարաչափ զարգացմանը
- քաղաքաշինության ոլորտում ամրապնդել օրնականությունը և կանխել ապօրինի շինարարության բազմազան դրսևորումները,
- պուրակների, զբոսայգիների և այլ կանաչ տարածքների պահպանման համար կիրառել պաշտպանության կոշտ միջոցներ, անխտիր ներդնել «կանաչ ճարտարապետության» սկզբունքը բոլոր թաղամասերում:
- բացառել քաղաքացիների իրավունքների և շահերի ոտնահարումը կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացում, միաժամանակ քաղաքացիների համար շինություններ կառուցելու ընթացքում չհարուցել արհեստական խոչընդոտներ և բյուրոկրատական քաշքշուկներ, եթե վերջիններս չեն վնասում մյուս քաղաքացիների շահերին՝ թափանցիկ դարձնելով շինարարության համապատասխան ընթացակարգերը և ձևակերպումները,
- առանց քաշքշուկների օրինականացնել գյուրեցիներին պատկանող բնակելի տներն ու տնամերձ հողամասերը.
- Երկրաշարժից փլուզված շենքերի և շինությունների ապամոնտաժում, նույնանման շենքերի կառուցում:

Կրթություն և գիտություն

- Գյումրի քաղաքի կրթության համակարգի զարգացման համալիր ծրագրի մշակումը և իրականացումը. Կրթության բնագավառում պետական ներդրումների ամենամյա պարբերական աճի ապահովումը
- Մանկապարտեզներին, դպրոցներին, ուսումնարաններին, քոլեջներին, բուհերին և գիտական հաստատություններին պատկանող շենքերի և շինությունների սեփականաշնորման բացառում
- Նախադպրոցական կրթական համակարգի մատչելիության ապահովումը յուրաքանչյուր ընտանիքի համար, մանկապարտեզների անվճար համակարգի

ներդրում, գյումրեցի երեխաները պետք է անվճար հիմունքներով այցելեն մանկապարտեզ

- Նախակրթարանների աշխատակիցների, դաստիարակների աշխատավարձերի աստիճանական բարձրացում, նրանց կարգավիճակի հավասարեցում ուսուցիչների կարգավիճակին, սոցիալական փաթեթների տրամադրում:

Դպրոցների, մանկապարտեզների և գրադարանների նյութատեխնիկական բազայի հարստացում, ուսմանամեթոդական ծրագրերի արդիականացում, համակարգչային և ինտերնետային ցանցի ձևավորում :

- Գյումրու տեխնոպարկի գիտական ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ նորարարական տեխնոլոգիաների մշակում և հավակնոտ ծրագրերի իրականացում
- Սոցիալապես անապիով խավերի ուսման վարձավճարների փոխհատուցման ֆոնդի ձևավորում:

Տնտեսություն

Գյումրիում կուտակված բազմաթիվ հիմնախնդիրների լուծման բանալին նախ և առաջ տնտեսության զարգացումն է: Այդ առումով անհրաժեշտ է առավել արագ նախաձեռնել Գյումրիում ժամանակակից գիտատար տնտեսության համակրգի ձևավորման գործընթացը, որի արդյունքում կարող է երաշխավորվել

- կայուն տնտեսական զարգացում և աշխատատեղերի ստեղծում
- Փոքր և միջին գործարարության զարգացման ուղղությամբ նպատակային պետական աջակցության քաղաքականության արդյունավետ իրականացում
- Օտարերկրյա ներդրողներին և հայրենական արտադրողներին հետևողական օգնության և աջակցության ապահովում աշխատատեղերի ստեղծման գործում

- Ինովացիոն, ռազմավարական կառավարման և սոցիալ-տնտեսական կայուն զարգացման, բալանսավորված ֆինանսական պլանավորման համակարգի և մեթոդների ներդրում
- Գիտություն-նորարարություն-արդյունաբերություն միասնական համակարգի ձևավորում

Կապ, հեռահաղորդակցություն և տրանսպորտ

- Գյումրու Շիրակ օդնավակայանին աջակցում նոր միջազգային չվերթների կազմակերպան հարցում
- Գյումրու ներքաղաքային ուղևորափոխադրումների նոր համակարգի ներդրում, որը կապահովի հասրակական տրանսպորտային միջոցների վարորդների համար արժանավայել աշխատանքային պայմաններ, բարձր աշխատավարձ, վարորդներին կտրամադրվեն սոցիալական փաթեթներ
- Հասարակական տրանսպորտի վիճակի բարելավման նպատակային ծրագրի մշակում և իրականացում

Սոցիալական ոլորտ

Սոցիալական քաղաքականությունը Գյումրիում դեռևս չի համապատասխանում իր առաքելությանը՝ սոցիալական համերաշխության և արդարության կատարմանը: Քաղաքապետարանի կողմից իրականացվող սոցիալական աջակցության և օգնության գործող համակարգի արդյունավետությունը խիստ ցածր է, թույլ է հասցեականությունը, որը հաճախ հիմք է դառնում սոցիալական արդարության սկզբունքի խախտման համար: Այսօր Գյումրիում անհրաժեշտ է մշակել և իրականացնել նոր սոցիալական ռազմավարություն և քաղաքանություն, որը էականորեն կբարելավի սոցիալապես առավել խոցելի խավերի և խմբերի վիճակը:

Շինարարություն և բարեկարգում

Գյումրու արտաքին տեսքի, գյումրեցու հարմարավետ ապրելակերպի, քաղաքում գործող ենթակառուցվածքների զարգացման համար անհրաժեշտ է մշակել ու իրականացնել քաղաքի բարեկարգման և ասֆալտապատման, բնակելի շենքերի ամրացման և վերանորոգման ամբողջական նպատակային ծրագիր: Այս խնդիրների լուծման համար առաջարկում ենք

- Անձնագրավորել Գյումրի քաղաքի շենքերն ու փողոցները, գույքագրել խնդիրները և սահմանել դրանց լուծման համար հստակ ժամկետներ ու նշանակել պատասխանատուներ
- Ապահովել քաղաքի փողոցների ու նրբանցքների լուսավորումը,
- Ասֆալտապատել ոչ միայն գլխավոր, այլ երկրորդական փողոցները, վերանորոգել բազմաբնակարան շենքերը
- Լուծումներ գտնել վթարային և քանդման ենթակա բազմաբնակարանային շենքերի բնակիչների համար
- Հատուկ ուշադրություն դարձնել քաղաքի ծայրամասերի փողոցների և թաղամասերի բարեկարգմանը

Բնապահպանություն

Աշխարհի առավել զարգացած քաղաքներում առաջնային կարևորում են բնապահպանական խնդիրները, մինչդեռ մեզանում բնությունը դիտվում է որպես շահագործման օբյեկտ:

Վերջին շրջանում մտահոգիչ են դառնում անբարենպաստ բնապահպանական միջավայրի հետ կապված շնչառական և մաշկային հիվանդությունները: Իրավիճակի շտկման համար անհրաժեշտ է՝

- Գյումրու բնապահպանական հայեցակարգի մշակում և ընդունում
- Կանաչ տարածքներում չհիմնավորված կառուցապատման դադարեցում
- Քաղաքային այգիների և զբոսանքի վայրերի բարեկարգում

- Ջրային ռեսուրսների խնայողական օգտագործման մեխանիզմների մշակում և ներդրում
- Կենցաղային թափոնների վերամշակման ձեռնարկությունների ստեղծում՝ բնապահպանական տեխնոլոգիաների կիրառմամբ

Կանաչ տարածքների, անտառածածկույթով հարուստ վայրերի անխնա օգտագործման համար պատասխանատվության խստացում,

- Ծառատունկների և կանաչ տարածքների կազմակերպման ընդլայնում
- Գյումրու «Շառլ Ազնավուրի» հրապարակի հարևանությամբ գտնվող «Հաղթանակի» զբոսայգու վերականգնում և նոր հանգստի ու կանաչ գոտիների ստեղծում
-

Մշակույթ և սպորտ

Հայ ժողովուրդը միշտ հպարտացել է իր հարուստ մշակույթով և լեգենդար մարզիկներով: Գյումրին միշտ եղել և մնում է արհեստի ու արվեստի, սպորտի ու մշակույթի քաղաք:

- Նպաստել արդի, ժողովրդական և կիրառական արվեստների ներդաշնակ զարգացմանը, քաղաքային փառատոնների և տոնախմբությունների կազմակերպմանը
- Խրախուսել մշակութային նշանակալի գործերի հեղինակներին
- Խրախուսել այլ պետությունների քաղաքների, Գյումրու քույր քաղաքների և Սփյուռքի համայնքների հետ մշակութային համագործակցությանը
- Ընդլայնել տարածաշրջանային և միջազգային մշակութային ծրագրերին Գյումրու մասնակցությանը,
- Վերանորոգել և կահավորել քաղաքային ենթակայության թանգարանները, գրադարանները, երաժշտական դպրոցները, բարձրացնել ոլորտի աշխատակիցների աշխատավարձերը:

- Սպորտի ոլորտում գործող բոլոր մարզադպրոցների վերանորոգում
- Մարզիչների աշխատավարձերի բարձրացում
- Մարզիկների խրախուսման, սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով համահայկական ֆոնդերի ստեղծում
- Վաստակաշատ մարզիկների և մարզիչների բնակարանային պայմանների բարելավում:

Բնակարանային տնտեսություն

Գյումրի քաղաքում առկա բնակարանային ֆոնդը հիմնականում գտնվում է անմխիթար վիճակում: Անբարեկարգ են շենքերի մուտքերը, տանիքները, միջբակային տարածքները: Բազմաթիվ բնակարաններում բացակայում են հանգստի գոտիներն ու խաղահրապարակները: Այս ոլորտում առաջարկվում է

- Բազմաբնակարանային շենքերի բարեկարգման աշխատանքների ծրագրավորման իրականացում,
- Բազմաբնակարանային շենքերի տանիքների և ջրհորդանների հիմնովին վերանորոգում
- Բոլոր բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում, մուտքային դռների թվային ցուցիչով ավտոմատ բացվող համակարգի ներդրում
- Բազմաբնակարանային շենքերի բակերի ծառերի էտման աշխատանքների իրականացում
- Բազմաբնակարանային շենքերի վրա փողոցների և շենքերի հասցեների ցուցակների պատրաստում և ամրացում,
- Երկրորդական փողոցների և բակային լուսավորության իրականացում,
- Բնակչության և սպասարկող կազմակերպությունների (ջրի, գազի, աղբահանության և այլ ոլորտների) հարաբերությունների հստակեցում և կանոնակարգում,

- Բնակելի շենքերի բակերում կանաչ գոտիների ձևավորում, տարեցների համար զրուցարանների տեղադրում, մանուկների համար խաղահրապարկների ստեղծում
- Բնակչության սպասարկման վարձերի գանձման գործընթացի կանոնակարգում՝ հիմք ընդունելով այն սկզբունքը, որ մարդիկ պետք է վճարեն միմիայն մատուցված ծառայությունների դիմաց
- Բարձրահարկ շենքերում ջրի շուրջօրյա մատակարարման հարցի հիմնովին լուծում
- Աղբահանության վիճակի բարելավում, աղբարկղների քանակի ավելացում՝ միաժամանակ հետամուտ լինելով, որ դրանք տեղադրվեն բնակելի շենքերից որոշակի հեռավորության վրա՝ պահպանելու համար շենքերի սանիտարական վիճակը:

Իրավական գործունեություն

- Իրավական ակտերի ընդունման որակ և օբյեկտիվություն
- Համայնքի շահերի պաշտպանություն, դատական և այլ ատյաններում
- Վարչարարության իրականացման ժամանակ արդարության սկզբունքների և օբյեկտիվության պահպանում
- Համայնքի և քաղաքացիների, իրավաբանական անձանց հետ հարաբերություններում, օրենքի գերակայության և արդարության սկզբունքների ապահովում: